2/15 ԴԵԿՏ. 1903. Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 25

# ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագին՝ 10 Փր. տարեկան

Հասցէ՝ Ред. на в. "ВЕРАДЗНУТЮНЪ" .— Русе
Réd. du jour. „VERADZNOUTIOUN" Roustchouk

## ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերջին ժամանակներս Հայ մամուլը ընդհանրապէս զբաղւում է, և այն էլ խիստ մեծ թափով, Ռուսահայ եկեղեցական կալուածների հարցով ու քննում նրան բազմակողմանի կերպով։

Լեգալ մամուլը կանգնած լեգալ հողի վրայ՝ չի կրցար իր բուռն բողոքը հրապարակ հանել, բայց իսկական յեղափոխական մամուլը՝ մնած իր բուն դերին մէջ՝ նկատ. հարցի վրայ նայելու յեղափոխականի ակնոցով և նրա սուր ու զգալի կողմերը միանգամայն պարզաբանելով՝ ցոյց տուեց որ Ռուսահայ իրականութիւնն էլ նոյնքան անտանելի, նոյնքան զզուելի և կրիտիքական է՝ որքան Տաճկահայինը։

Իրողութիւնը մեզ ցոյց տուեց որ ռուսական կոզակը նոյնքան վայրագ գտնուեց, որքան՝ քիւրտ Համիդիէն, Գոլիցինը նոյնքան վատ և զզուելի վարուեց՝ որքան Պաշրի փաշան. ուստի, դժուար չէր հետևցնել՝ թէ Ռուսահայը նոյնքան վտանգի մէջ էր. որքան՝ Տաճկահայը։

Վերջին շրջանը—հերոսները և նրանց ազնիւ կատարուած հոգեհանգիստները՝ ամենագեղեցիկ ու փաւմ փաստերն են մեր ասածները հաստատելու և ըմբռնելի դիւրացուցանելու համար։

Արդէն, շատ մեծ նեղութիւնը չը պիտի կրէինք ապացուցանելու համար, որ՝ կռիւը. հայկական ընդդիմադրութիւնը պէ՛տք է որ տարածուէր Տաճիկ և Ռուս Հայկական հողերի վրայ, որովհետև երբ մի անգամ հալածանքը, կատարածը կար՝ նրա դէմ պէ՛տք էր որ ընդդիմադիր ոյժը երևան գար. հակառակ դէպքում Հայութիւնը շատ խառացի կերպով պէտք էր ընդունէր իր ճակատին "ոչխար" ածականը։

Ռուսահայը ներշնչուած մասնաւորապէս Տաճկահայ յեղ. կեանքից, իսկ ընդհանրապէս համահայկական յեղ. Գաղափարից, պարզ և տրամաբանական էր, որ "այդպիսի վեհ և կրիտիկական բոպէում" իր ժանգոտած սուրը պատեանից դուրս քաշէր և "կեցցէ՛ ազատութիւն" գոչէր։

Ռուսահայը շատ գեղեցիկ կերպով տեսաւ թէ ինչպէ՞ս Տաճկահայը կոտորուեց, շնորհիւ այն հանգամանքին, որ անկարող եղաւ առած բաղէին զէն ի ձեռին թշնամուն դէմ դուրս գալ. Նա տեսաւ թէ ինչպէ՞ս Տաճկահայը խաղալիկ դարձաւ Եւրոպական դիպլոմատիա կոչուած խորամանկ ձեռքին՝ միայն՝ և միայն նրա համար, որ չգիտցաւ սուրի դէմ սուր, գնդակի դէմ գնդակ արձակել։ Եւ այս բոլորը տեսնելուց յետոյ կարո՞ղ էր Ռուսահայը որպէս "ոչխար" ընկճվիլ. կարո՞ղ էր լռիկ մնջիկ տանել, կրել այն բոլոր անարդարութիւնները և զրկանքը, որ գալիս էր Մեծազօր Ցարից. Քրիստոնէից պաշտպան ??? Ցարից...

Ո՛չ, Ռուսահայը գիտցաւ ըմբռնել ժամանակի ոգին ու կարող եղաւ նոյն այդ ոգուն համապատասխան դիրք բռնել, տալով հարիւրաւոր զոհեր՝ սակայն պահելով միշտ բարձր Հայկական ազատութեան և Հայ Յեղ. գաղափարը։

Սակայն այս առթիւ մենք մի անգամ ևս տխրած ենք մի ակնարկ էլ գցել մեր թերթերից մի քանիսի արտայայտած մտքերի վրայ ու այժմեանից ասել թէ՝ այդ կարգի բոլոր գրուածները,—գուցէ բղխած անկեղծ սրտերից՝ բայց խիստ միակողմանի ու նոյն իսկ իրականութեան անգիտակից, անծանօթ լինել կը թւին մեզ։

Յայտնի է թէ, Հայ յեղափոխականը՝ հետևաբար Հայ յեղափոխութիւնը, կոչումն ունի ընդհ. Հայութեան ազատագրութեան գործին նուիրել, յայտնի է նաև որ ցարդ այդ նպատակը իրագործելու համար ասպարէզ ընտրուած էր Տաճկահայաստանը՝ աչքի առաջ ունենալով ինչ ինչ մասնաւոր հանգամանքներ, և որ ներկայումս էլ նա չի դադարած նոյն դերը խաղալուց, այլ սակայն այդ այդպէս լինելով, կարո՞ղ ենք արգիլել Ռուսահայը, Պարսկահայը ինքնապաշտպանութեան դիմելուց. կարո՞ղ ենք ըսել Ռուսահային, "դու մի՛ պաշտպանիր քեզ, զէնքդ առ և վազիր Տաճկահայաստան" կարո՞ղ ենք, և կամ ո՞ր խելքը գլուխը մարդը իրան թոյլ կը տայ այդպիսի բան ասելու, քանի որ մարդ արարած ը. Հետևաբար Հայը, պարտաւոր է դիմել ինքնապաշտպանութեան. և դիմեց նա... ու մնաց անդ. հերոսաբար։

Վերոյիշեալ թերթերը կարծում են, որ Ռուսահայերի այդ կռիւը արուեստական էր և մի ինչ որ թելադրութեան արդիւնք, այլ սակայն մենք կըսենք. ո՛չ, ընդհակառակը այդ շատ բնական և բնորոշ էր, ուստի և խիստ գնահատելի ու գովելի։

Ասացինք, թէ մեր այդ թերթերը անգիտակից կամ անծանօթ են իրականութեան ու մենք կրկնում և ընդգծում ենք այդ, որովհետև ո՛վ որ ծանօթ է ներկայիս ընդհանրապէս Կովկասի և մասնաւորապէս Հայերիս կացութեան՝ անկարելի է որ մեզ հետ չպոռայ "կեցցէ՛ յեղափոխութիւն". անկարելի՛ է որ չաջակցինք "օգնենք Ռուս յեղափոխականներին և Սօցիալիստներին՝ տապալելու համար Ռուս. Ցարիզմը". այո՛, միանգամ ընդ միշտ պիտի համոզուել, որ Ռուս Ցարիզմը եղել է և է Տաճկահայ յեղափոխութեան վիժեցման և 300,000 զոհերին իսկական պատճառը։ Տապալե՛լ Ցարիզմը՝ նշանակում է Հայկակ. ազատագրութեան գործը կապանքներից, շղթաներից ազատել։ Տապալե՛լ Ցարիզմը՝ նշանակում է նպաստել ընդհանուր մարդկային ազատագրութեան գործին։

Հայկական իրականութիւնը այսպէս լինելով, պէտք է որ ամբողջ Հայութիւնը ամեն տեղ զինուի և կազմ ու պատրաստ մնայ։ Ուր ո՛ր էլ լինի՝ առած բաղէին, նա, որպէս առիւծ պիտի նետուի կռւի դաշտը՝ կատարելու իր Ս. պարտականութիւն։

---

## "ԱԼԱՆ-ԹԱԼԱՆ"

Հայ ազգի գլխին խոյացող արծիւ
Համիդից նորան զինւ անկենդան
Խաւարի որդին,—սատանի անգղնիւ
Որոշեց ջնջել անունն հայկական.
Անսուրբ օրէնք, արիւն ու թալան,
«Թմրած» Հայ-ազգին կուլ տալու նրան։

Նա սարսափ ընկաւ՝ երբ Մասեաց
խորքից
Խուլ «յառաջ»... ձայներ լսւեցան,
Երբ զարկեր խլեր նրնջած հրնոցից
Կայծակ լուսյն հեղեղներ թռան...
Գեղջուկն իր բահն՝ կրօրեարը զէնքով
Կռնայք, պատանիք, ծերերը՝ բարով։

Զարթեց ազգի հրաշագործները
Ամեն սրբազան նշան թալանի.
Թէպէտ ներկուեցան նոյն թերթերը՝
Բայց ... մենք ցոյց տուինք կորով
կենդանի,
«Հնչակ—Դրօշակ» հաղորդող եղբայրք
Ոտքի կանգնեցան ուժով ապստամբ։

Անարի ցարի ոսկւոն՝ Գալի — ծեռ
Մինչ կարծեր հանգած Հայկական հուրը
Հողմավար թռաւ փրփրած հոգին
Շանթակոծ արաւ... շղշղաց սուրը.
Նա տապալեցա՛ւ... ընկաւ երեք քաջ,
Արամ—վահաններ թռան ընդ առաջ։

Կա՛ր կեցէ՛ք Մասեաց ճակատին մի համար,
Այնտեղից հնչէ սակեղէն «Հնչակ»
Եւ նորա մօտը ծփայ անպարտ
Հայրենիքասէր կարմիր «Դրօշակ».
Յեղափոխութեան սրբազան կրակ,
Թող հրահրի, մտնի ամեն Հայ սրտ։

Իր աղօթքներով օդը թնդացնէ
Թալանւած վանքին աղքատ միաբան,
Զոհւած քաջերի անունը խառնէ,
Բանայ այն դուռը՝ ուր հանգչի Վարդան.
Աղօթք ու բուրվէն մեր զոհերն անմեղ
Չեն ուզում... «Վրէ՛ժ» ձայնէք ամեն
տեղ։

Ցարը լո՛ւ տեսաւ մեր ուժի չափը,
Իմ հոգու պաշտած քաջարի Հայեր,
Նա հետուն նրստած, ծովերի ափը,
Ուժն է հաւաքում խեղ ճանջերի.
Զինուէ՛ք, զարգարւէք, իջէք իր հետ
վեղ.
Ցարիզմի դէմը կռուենք միատեղ...

Էն արևանցեալը՝ որ Թուրքը թափեց,
Էն անեղ սուգը, որ օրդոյն աշխարհն...
Նա Ցարի կամքը միայն կատարեց
Թափելով Հայի արիւնը վարար,
Մենք վրէժխնդիր հայրենի դաշտին
Դուրս գանք, խորտակե՛նք սեւ փառքը վանքին։

Սիլուան

